ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԳԵՂԱՄԻ ԽԱԼԱԹՅԱՆ

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

ԺԳ.00.02- <<Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա>> (հայոց լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Լ. Մ. Խաչատրյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ջ. Հ. Գյուլամիրյան**

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գ. Մ. Մխիթարյան**

Առաջատար կազմակերպություն՝ Մ. Նալբանդյանի անվան Շիրակի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018թ. հունվարի 24-ին՝ ժամը 12^{00}–ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. դեկտեմբերի 23-ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Ա. Հ. Սվաջյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը, համընթաց գնալով եվրոպական կրթական չափանիշներին, ձգտում է ստեղծել յուրահատուկ ազգային կրթահամակարգ, որ միաժամանակ կարողանա դիմակայել համաշխարհայնացման մարտահրավերներին: Ազգային կրթահամակարգի առանցքը կազմում է մայրենի լեզվի ուսուցումը, որ միտված է սովորողներին զինելու ոչ միայն կապակցված գրավոր և բանավոր խոսք կառուցելու որոշակի հմտություններով, այլև նրանց ապահովելու տեսական գիտելիքներով, որ հնարավորություն կընձեռի լեզվական առարկայական իրողություններից անցնելու լեզվական վերացարկվածության:

Հանրակրթական դպրոցում լեզվի ուսուցման տարաբնույթ խնդիրների լուծմանը ծառայում է լեզվական համակարգի առանձին մակարդակների և նրանց միավորների յուրացումը, որոնցից մենք կարևորում ենք շարահյուսական մակարդակի ուսումնասիրությունը: Շարահյուսական մակարդակային միավորները՝ բառակապակցությունն ու նախադասությունը, կազմում են հաղորդակցման միավորի՝ խոսքի առանցքը, ուստի հանրակրթական դպրոցի միջին դասարանների հայոց լեզվի դասընթացի մոտավորապես երկու երրորդը հատկացված է նախադասության և խոսքի ուսումնասիրմանը:

Ներկա ժամանակներում, հատկապես զանգվածային լրատվամիջոցներում, զգալի թիվ են կազմում օտար լեզուներից պատճենումները, որոնք չեն համապատասխանում բառակապակցությունների ներքին իմաստային օրինաչափություններին: Այդ սխալ կառույցներն ազդում են սովորողների բանավոր խոսքի վրա, որն իր հետքն է թողնում գրավոր խոսքում: Դա մեծ մասամբ վերաբերում է սխալ խնդրառությանը, համաձայնությանը, օտարալեզու ոճերին, ուստի բառակապակցության գիտամեթոդական ուսումնասիրությունը հանրակրթության հիմնական դպրոցում կարող է կապակցված խոսք կառուցելու լուրջ կռվան դառնալ:

Հիմնական դպրոցում այս ուղղությամբ իրականացվող աշխատանքների կարևորությամբ, ինչպես նաև հնարավոր սխալների կանխմանն ու հաղթահարմանը միտված մեթոդական մշակումների կարևորությամբ է պայմանավորված մեր հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակն է մշակել և ուսուցման գործընթացում ներդնել բառակապակցությունների յուրացման ինքնատիպ համակարգ, որը կնպաստի բառակապակցությունների արդյունավետ ուսումնասիրմանը:

Հետազոտության օբյեկտը հանրակրթական հիմնական, մասնավորապես միջին դպրոցում սովորողների բառապաշարի հարստացման գործընթացն է:

Հետազոտության առարկան հիմնական դպրոցում բառակապակցությունների ուսումնասիրության գործնական կիրառման մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտամանկավարժական վարկածը: Մեր գիտական կանխատեսմամբ՝ բառակապակցությունների ուսումնասիրման մեթոդական համակարգը հիմնավորված կլինի և կնպաստի սովորողների բառապաշարի հարստացմանը, ընթերցողական կարողության ու բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը, եթե՝

- նկատի առնվեն սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները,
- ապահովվի ուսուցման փուլային հաջորդականությունը,
- աշակերտները լեզվական նյութը յուրացնեն գիտակցաբար, քերականական գիտելիքները ձեռք բերվեն գեղարվեստական գրականությունից քաղված ինքնատիպ հատվածների, կենդանի լեզվի, դաստիարակչական ու ճանաչողական արժեք ունեցող բովանդակալից օրինակների հիման վրա,
- բառակապակցությունների ուսումնասիրման գործընթացը ընթանա «ընկալում – ըմբռնում – յուրացում – իմաստավորում - կիրառում - ինքնուրույնաբար նոր գիտելիքների ձեռքբերում» մեթոդական շղթայի օղակներով:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության նպատակով և գիտական վարկածով պայմանավորված՝ անհրաժեշտ է եղել լուծելու հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և դիտարկել ազատ բառակապակցությունների ձևավորման և դասակարգման տեսական հիմունքները ժամանակակից հայոց լեզվում, հիմնավորել դրանց ուսումնասիրության անհրաժեշտությունը հանրակրթության հիմնական դպրոցում,
2. պարզել «Բառակապակցություն» ուսումնական թեմայի տեղն ու դերը տարրական դպրոցում՝ մայրենիի դասընթացում, բացահայտել կրտսեր դպրոցականների գիտելիքների և կարողությունների մակարդակները լեզվական այդ նյութի ուղղությամբ,
3. ուսումնասիրել «Բառակապակցությունների» ուսուցման ուղղությամբ մեթոդական գրականության մեջ և հանրակրթության հիմնական դպրոցում առկա փորձը, դիտարկել ուսումնական այդ նյութի ուսումնասիրության փուլայնության սկզբունքներն աշակերտակենտրոն մեթոդական մոտեցումների տեսանկյունից,
4. մշակել հիմնական դպրոցում «Բառակապակցություն» թեմայի

փուլային ուսումնասիրության արդյունավետությանը նպաստող փոխգործուն մեթոդների և աշակերտակենտրոն վարժությունների համակարգ՝ նկատի ունենալով աշակերտների բառապաշարի հարստացման, նրանց ընթերցողական կարողությունների զարգացման, ոճական - արտահայտչական կարողությունների առնչությունները՝ կապակցված խոսք կառուցելու համատեքստում, փորձարկել մշակված մեթոդական համակարգը և նրա արդյունքները ներդնել հիմնական դպրոցում:

Հետազոտության համար մեթոդական հիմք են հանդիսացել.

1. կրթության, դաստիարակության և ուսուցման վերաբերյալ փիլիսոփայական, հոգեբանական և մանկավարժական հայեցակարգային մոտեցումները,
2. գիտական իմացության տեսությունը՝ իր «կենդանի հայեցողությունից դեպի վերացարկված մտածողություն, այնտեղից էլ դեպի պրակտիկա» սկզբունքով,
3. ուսուցման և դաստիարակության սուբյեկտների մասին մարդաբանական պատկերացումները,
4. լեզվաբանության և լեզվի ուսուցման մեթոդիկայի ընդհանուր սկզբունքներն ու հիմնադրույթները:

Հետազոտության մեթոդները: Առաջադիր խնդիրների լուծման համար ընտրվել և կիրառվել են հետևյալ մեթոդները.

1. Էմպիրիկ հետազոտության մեթոդներ.

ա) դիտում. տվյալներ և փաստեր ենք հավաքագրել և մշակել թեմայի ուսումնասիրման և գործնական կիրառման համար,

բ) զրույց, բանավեճ. սրանք կիրառել ենք մանկավարժության սուբյեկտների միջև հաղորդակցման արդյունավետության բարձրացման և «Բառակապակցությունների ուսուցումը հանրակրթության հիմնական դպրոցում» թեման գիտելիքների յուրացման փուլերով ուսումնասիրելու համար (հաղորդում, ընկալում, յուրացում, գիտակցում, իմաստավորում, կիրառում) ,

գ) թեստավորում. բացահայտել ենք գիտափորձին մասնակցած սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, մանկավարժության սուբյեկտների անձնային և մասնագիտական որակները, պարզել թեմայի լեզվաբանական առանձնահատկությունները,

դ) փորձարկում, որ նպաստել է մեր հետազոտական թեմայի վերաբերյալ մեթոդական հանձնարարականների գործնական կիրառմանը

2. Տեսական վերլուծությունների, մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման և ընդհանրացման մեթոդների կիրառմամբ մշակել ենք «Բառակապակցություններ» թեմայի ուսուցման մեթոդական համակարգն իր բաղադրատարրերով, ձևավորվածության չափանիշներով ու

մակարդակներով, շարահյուսական հիմունքներով և մանկավարժական պայմաններով:

Հետազոտության գիտական նորույթն է՝

1. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկայում «Բառակապակցություններ» թեմայի ուսումնասիրման գործընթացում **նորովի մոտեցում ենք հանդես բերել՝** այն դիտարկելով որպես դպրոցականների բանավոր խոսքի զարգացման և բառապաշարի հարստացման միջոց:

2. **Մշակել, փորձարկել** և մանկավարժական գործընթացում **ներդրել ենք** ամբողջական մեթոդական համակարգ, որի միջոցով իրականացրել ենք «Բառակապակցություններ» թեմայի ուսուցումը՝ յուրաքանչյուր մեթոդ, մեթոդական հնար, միջոց ու ձև դիտարկելով որպես առաջարկվող մեթոդական համակարգի անբաժանելի մաս:

3. «Բառակապակցություն» թեմայի ուսուցման ընթացքում սովորողների տրամաբանական, ստեղծագործական, լեզվական մտածողության ձևավորմանը, ինչպես նաև մեթոդական մեր համակարգի բաղադրատարրերի գործնական կիրառմանը **զուգակցել ենք** մանկավարժության, տարիքային հոգեբանության, լեզվաբանության ու դասավանդման ժամանակակից մեթոդիկայի տվյալները, դրանք ի մի ենք բերել և կիրառել գիտագործնական արժեքին համապատասխան:

Հետազոտության տեսական նշանակությունը.

- հետազոտության նյութն ու տեսական եզրահանգումները կարող են նպաստել բառակապակցությունների ուսումնասիրման և նրա ուսուցման մեթոդական համակարգի ամբողջացմանը,
- մշակվել են սովորողների տրամաբանական, ստեղծագործական, լեզվական մտածողության ձևավորմանը նպաստող մեթոդական հանձնարարականներ, կիրառվել են արդյունավետ ուղիներ ու միջոցներ և դրանք ներառվել են ընդհանուր մեթոդական համակարգ,
- հիմնավորվել է, որ «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրման միջոցով ավելի են ամրապնդվել մայրենի լեզվի նկատմամբ սովորողների սիրո, հետաքրքրության, լեզվական ճաշակի ձևավորման, լեզվի մաքրության, նրա գործածության ոլորտների գիտամանկավարժական հիմքերը:

Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ բառակապակցությունների ուսուցման լեզվաբանական, հոգեբանական և մեթոդական համակարգերի ձևակերպված հիմքերը պարունակում են որոշակի ցուցումներ և երաշխավորություններ, որոնք կարող են օգտագործվել ինչպես մայրենի լեզվի ուսուցիչների, սկզբնական կրթության և բանասիրական ֆակուլտետների ուսանողների, այնպես էլ լեզվի տեսության հարցերով զբաղվող մասնագետների կողմից առարկայական ծրագրեր և դասագրքեր կազմելու ժամանակ:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում է.

- մանկավարժական և մեթոդական արդի նվաճումների գիտական վերլուծությամբ, մանկավարժական գիտափորձի ընդգրկունությամբ և համակարգային բնույթով, մեթոդական համակարգի բաղադրատարրերի գիտականորեն հիմնավորված միասնությամբ, փորձարկվող սուբյեկտների անհրաժեշտ քանակով և ատենախոսի՝ որպես ուսուցիչ անձնական մասնակցությամբ,
- հայեցակարգային դիրքորոշումների մեթոդաբանական հիմնավորվածությամբ, տեսության ու պրակտիկայի միասնությամբ իրականացված և հետազոտության տրամաբանությամբ կատարված առաջադիր խնդիրների արդյունավետ լուծմամբ ու համալիր մեթոդների և մեթոդական հնարների կիրառմամբ,
- հետազոտության թեմայի՝ մեր կողմից ներկայացված մեթոդական համակարգի բաղադրատարրերի մշակվածության արդյունավե-տությամբ, հուսալիությամբ, հետազոտության նպատակի, գիտական վարկածի, խնդիրների, պաշտպանության ներկայացված դրույթների և այդ ամենից բխող համապատասխան եզրակացությունների ներդաշնակ միասնությամբ:

<u>Հետազոտության հիմնախնդրի մշակվածության աստիճանը.</u>

Թեմայի վերաբերյալ դիտարկումները հիմնականում կրում են տեսական բնույթ (Մ. Աբեղյան, Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Ա. Մարգարյան, Վ. Քոսյան)[1], մասնակի անդրադարձներ կան թեմայի ուսուցման վերաբերյալ (Ա. Ղարիբյան, Ս. Գյուլբուդաղյան, Ջ. Գյուլամիրյան)[2], սակայն խնդրո առարկայի ուսումնասիրության տեսական և մեթոդական կապերը փոխկապակցված տրվում են առաջին անգամ: Այս համակարգի արդյունավետությունը հաստատվել է փորձարարական բազա հանդիսացած դպրոցներում (Երևանի Ռաֆֆու և Խրիմյան Հայրիկի անվան դպրոցներում, Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում):

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հայեցակարգային դրույթները.

---

[1] Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., «Միտք» հրատ., 1965: Աբրահամյան Ս., Աշակերտների խոսքի զարգացումը, Ե., «Լույս» հրատ., 1973: Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Ե., ԳԱԱ հրատ, 1957: Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., ԵՀՊ հրատ., 1993: Քոսյան Վ., Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975:

[2] Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954: Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., «Լույս» հրատ., 1987: Գյուլամիրյան Ջ., «Բառակապակցություն» խոսքային միավորի ուսումնասիրումը կրտսեր դպրոցում, Ե., «Նախաշավիղ», 2010, թ. 5:

1. Հանրակրթական դպրոցում «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրումը կարևոր դեր ունի հիմնական դպրոցում դրա ուսումնասիրման համար ընտրված շարահյուսական մակարդակի միավորների հստակ առանձնացման, դրանց ուսումնասիրման շարունակականության ապահովման, այդ գործընթացի առանձնահատկությունների բացահայտման, գիտակցական ճանաչման և արդյունավետ կիրառման հարցում:

2. Մեր կողմից փորձարկված և ուսումնական գործընթացում կիրառման առաջարկվող մեթոդական համակարգի միջոցով «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրումը կնպաստի սովորողների տրամաբանական, ստեղծագործական, լեզվական մտածողության ձևավորմանը, բառապաշարի հարստացմանը, կարդալու հմտության ձևավորմանն ու պատկերավոր խոսքի զարգացմանը:

3. «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրման արդյունավետությունը պայմանավորված է հայոց լեզվի դասընթացի յուրացման գործընթացում միջառարկայական և ներառարկայական կապերի ստեղծմամբ, փոխգործուն, աշակերտակենտրոն մեթոդների, դերային և մտածողական խաղերի կիրառմամբ, ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրության բարձրացմամբ:

4. Հանրակրթական դպրոցում «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրումը պահանջում է նոր՝ փոխներգործող մեթոդների, մեթոդական ինքնատիպ հնարների, հաղորդակցական, տեղեկատվական, ուսուցման տեխնիկական միջոցների, կազմակերպական յուրահատուկ ձևերի և տարաբնույթ դասատիպերի կիրառում:

Հետազոտության փորձաքննությունն ու արդյունքների ներդրումը: «Բառակապակցությունների ուսուցման հիմնախնդիրները հանրակրթության հիմնական դպրոցում» թեմայով մեր ուսումնասիրության արդյունքների փորձաքննությունն իրականացվել է լույս ընծայած **6** գիտական հոդվածներով, տարբեր գիտական տեղերում կարդացված դասախոսություններով և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնում կազմակերպված քննարկումներով, որտեղ և աշխատանքը երաշխավորվել է հրապարակային պաշտպանության:

Մեր հետազոտության արդյունքները ներդրվել են փորձարարական բազա հանդիսացած Երևանի Ռաֆֆու, Խրիմյան Հայրիկի անվան դպրոցներում, Օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջում:

Հետազոտության անցկացման փուլերը: Հետազոտությունն իրականացվել է երեք փուլերով:

- Առաջին (2009-2010) փուլում ուսումնասիրել ենք և վերլուծել մանկավարժական, փիլիսոփայական, հոգեբանական, քերականական և մեթոդական գրականություն, որոշակիացրել ու հարստացրել ենք

հետազոտության գիտական կառույցը, իրականացրել ենք նախնական փորձարարական հետազոտական աշխատանքներ: Այդ ընթացքում բացահայտել ենք հիմնական դպրոցում սովորողների լեզվաբանական գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակը, ծրագրային նյութերի բովանդակության և մեթոդական համակարգում տեղ գտած թերությունները:

- Երկրորդ (2010-2012) փուլում խորությամբ դիտարկել ենք հետազոտության տեսական դրույթները, մշակել ենք մանկավարժական գիտափորձի բովանդակությունն ու մեթոդիկան, հիմնավորել թեմայի ուսուցման նպատակով մշակված ու ներդրված մեթոդական համակարգը:
- Երրորդ (2012-2013) փուլում իրականացվել է «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրության ուղղությամբ նոր համակարգի ներդրում, հիմնավորվել է ներդրման ու կիրառման մեթոդիկան: Այս փուլում ավարտվել է ատենախոսության շարադրումը, հրատարակվել են հիմնախնդրի բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներ:

Հետազոտության ծավալն ու կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, ծավալը՝ համակարգչային 167 էջ. այն ներառում է ութ գծապատկերներ և աղյուսակներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, գիտական վարկածը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդական հիմքերը, ներկայացվել են հետազոտության փուլերը, շարադրվել են գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև տրվել են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխը («Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրման գործընթացի բովանդակությունը և մեթոդաբանական սկզբունքները հիմնական դպրոցում) բաղկացած է հինգ ենթագլուխներից:

1.1. «Բառակապակցություն» թեմայի տեղն ու դերը հանրակրթական դպրոցի հայոց լեզվի դասընթացում. պատմական ակնարկ» ենթագլխում ներկայացվում են շարահյուսագիտության բնագավառում հայ քերականների ***ձեռքբերումները***՝ կապված բառակապակցության ըմբռնման հետ: Վերլուծվում են, մասնավորապես, Մ. Աբեղյանի, Վ. Առաքելյանի, Ա. Ղարիբյանի, Ս. Գյուլբուդաղյանի, Ալ. Մարգարյանի, Ս. Աբրահամյանի, Վ. Քոսյանի տեսակետները, որոնք հիմք են հանդիսացել մեր հետագա շարադրանքի համար: Դիտարկվում են նաև անցյալում և ժամանակակից դպրոցում գործող

դասագրքերը, տրվում են թեմայի ուսուցման առնչությամբ դասագրքերում առաջադրվող մեթոդական հնարները:

1.2. «Հետազոտության մեթոդաբանությունը և նրա տեսական ու մանկավարժական հիմունքները ենթագլխում» վերլուծվում է *մանկավարժական մեթոդաբանությունն* իր բաղադրատարրերով, որոնք գործնական կիրառություն են ստանում բառակապակցությունների ուսումնասիրման գործընթացում՝ դառնալով նրա տեսական հիմքը:

1.3. «Բառակապակցություն» լեզվական միավորի ուսումնասիրության գործընթացի մեթոդական սկզբունքները և փուլայնության հիմնավորումը» ենթագլխում հիմնախնդրի մեթոդաբանության հարցերի լուծումը պայմանավորել ենք մի շարք մանկավարժական սկզբունքներով: Դրանցից կարևորել ենք՝ *աստիճանականության՝ փուլայնության սկզբունքը, ուսուցման գործընթացի գործնականությունը, ստեղծագործական մոտեցման սկզբունքը, տեսության և պրակտիկայի կապի սկզբունքը, մանկավարժական գործընթացների և ուսումնասիրվող լեզվական երևույթների համակողմանի դիտարկման սկզբունքը, պատմականության և տրամաբանականության միասնության սկզբունքը, համակարգվածության սկզբունքը, անձի գործունեության ակտիվության՝ աշակերտակենտրոնության սկզբունքը և այլն:*

«Բառակապակցություն» լեզվական միավորի ուսումնասիրումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ուսուցման *աստիճանականության և հաջորդականության սկզբունքները.* ուսումնական նյութը ուսումնասիրվում է՝

ա) տարրական դպրոցում՝ որպես խոսքի միավոր **գրաճանաչության նախապայքբենական շրջանում**,

բ) **գրաճանաչություն այբբենական շրջանում.** բառակապակցություն հասկացության ուսումնասիրում, յուրացում (իմաստավորում) և կիրառում. ածական + առարկայի նկար կաղապարի օգնությամբ,

գ) **հետայբբենական շրջան**, տարրական դպրոցի երրորդ դասարան,

դ) **հիմնական դպրոցի 2 – 9-րդ դասարաններում** «բառակապակցությունը» դիտարկվում է իբրև խոսքի բաղադրիչ, իբրև ածականի ուսումնասիրմանը խթանող միավոր, իբրև գրական կերպարները բնութագրող միջոց:

1.4. «Բառակապակցության տեսակներն ըստ քերականական կապերի և նրանց ուսումնասիրման մեթոդիկան» ենթագլխում հիմնավորվում է հիմնական դպրոցում «բառակապակցություն» լեզվական միավորի ուսումնասիրման ոչ միայն մանկավարժական, այլև աշակերտական նպատակները: Եվ որպեսզի այդ թեման ուսումնասիրելու պահանջմունք առաջանա աշակերտների մեջ, և այն դառնա նպատակ, մենք «Բառակապակցություններ» թեման ուսումնասիրելիս կիրառում ենք ինչպես ավանդական (ուսուցչի խոսք, զրույց, վերլուծություն), այնպես էլ

ժամանակակից համագործակցային մեթոդներ և մեթոդական հնարներ (ուսուցման ԽԻԿ համակարգ, m-աձև աղյուսակ, համագործակցային մեթոդ)։

ա) Խթանման փուլում աշակերտները գալիս են այն հետևության, որ լեզվական միավորները, այդ թվում՝ հնչյունները և բառերը, կարող են խմբեր կազմել, ինչպես՝ գեղեցիկ, առանց, սիրել, ծաղիկ և այլն, սակայն այդ բառախումբը ոչ մի տրամաբանական հիմք չունի։ Մինչդեռ բառեր կան, որոնք կապված են լինում քերականորեն, օրինակ՝ գեղեցիկ աղջիկ, առանց սիրո, սիրել հայրենիքը, բազմերանգ ծաղիկներ և որոշակի իմաստ են արտահայտում։ Այս եղանակով պարզից դեպի բարդը, ծանոթից դեպի անծանոթը տանող ճանապարհով սովորողները հանգում ենք բառակապակցության գաղափարին։

բ) *Իմաստի ընկալման փուլում* սովորողները ձեռք են բերում բառի և բառակապակցության վերաբերյալ տեսական տեղեկություններ, սահմանումներ, ձևակերպումներ, դիտարկում են դրանք և ինդուկցիա - դեդուկցիա մեթոդական շղթայի միջոցով իմաստավորվում են իրենց ձեռք բերած գիտելիքները։

Դիտարկելով տարակազմ նախադասությունները՝ աշակերտները համոզվում են, որ բառակապակցության գերադաս անդամը կարող է արտահայտվել գոյականով, ածականով, թվականով, բայով, մակբայով։ Ըստ այդմ էլ՝ բառակապակցությունները լինում են **գոյականական և բայական։**

Գոյականական են այն բառակապակցությունները, որոնց գերադաս անդամը (բառը) արտահայտված է գոյականով, ինչպես՝ **հայտնի *դերասան,* սիգապանծ *լեռներ,* քսանմեկերորդ *դար*** և այլն։

Բայական են այն բառակապակցությունները, որոնց գերադաս անդամը (բառը) արտահայտված է դերբայով, ինչպես՝ **ակնդետ *նայել,* ճիշտ *խոսել, աջակցել* ընկերոջը, վաղուց *քնած,* ամենուրեք *հանդիպող,* վեպ *գրելիս*** և այլն։

Հանդիպում ենք նաև **ածականական (շատ *գեղեցիկ*), թվականական (համարյա *քսան*) և մակբայական (չափազանց *արագ*)** տեսակներ։

գ) Կշռադատման փուլում բառի, բառակապակցության և նախադասության քերականական տարբերությունն ակնհայտ դարձնելու նպատակով կազմում ենք m-աձև աղյուսակ. սովորողներն առանց դժվարության նկատում են, որ m-աձև աղյուսակի 1-ին շարքում բառեր են, 2-րդում՝ բառակապակցություններ, 3-րդում՝ նախադասություններ։

Թեմայի վերաբերյալ գիտելիքների ամրակայումը նպատակային ենք համարում իրականացնել «**Համագործակցային» մեթոդով:** Այն իրականացնում ենք սովորողների համագործակցության և ակտիվ մասնակցության միջոցով։ Այս նպատակով դասարանը բաժանվում է համագործակցային խմբերի, առաջադրվում են թեմայի վերաբերյալ հարցեր և տարատեսակ վարժություններ։

1.5. «Բառակապակցությունների ուսուցման առանձնահատկություն-ները» ենթագլխում հիմնավորվում է բառակապակցությունների ուսուցման համակարգի գլխավոր առանձնահատկություններից մեկը. այն սկսվում է դեռևս քերականական հասկացությունների ձեռքբերմամբ, ընկալմամբ, վերացարկմամբ, հասկացմամբ, յուրացմամբ, ամրապնդմամբ և կիրառմամբ: Այդ գործընթացն առավելապես առնչվում է ճանաչողության ընդհանուր գիտական և տրամաբանական մեթոդներին. *վերլուծությանը, համադրմանը, վերացարկմանն ու ընդհանրացմանը:*

Թեման ուսումնասիրելիս կիրառել ենք նաև *զրույցի մեթոդը, հարցման մեթոդը, մտքերի տարափը կամ մտագրոհը, հարցուպատասխանի մեթոդը* և այլն: Կարևորել ենք նաև *խճանկար կամ գնահատվող բանավեճը, էքսկուրսիան, շրջագայություն պատկերասրահում, դասախոսություն, ԳՈՒՍ (Գիտեմ – Ուզում եմ սովորել – Սովորել եմ) , պրիզմա, փոխգործուն գրառումների համակարգ, երեք բանալի և մեկ կողպեք, եռաստիճան հարցազրույց, T-աձև և m-աձև աղյուսակներ, հինգրոպեանոց շարադրանք և թեստավորում* մեթոդներն ու մեթոդական հնարները:

Բառակապակցություններն ուսումնասիրելիս կիրառել ենք վարժությունների հետևյալ տեսակները՝ *նախապատրաստական, մարզողական, վերլուծական, կիրառական, ստեղծագործական ամփոփիչ* և այլն:

Երկրորդ գլուխը («Գոյականական բառակապակցությունների բնութագրիչներն ու նրանց ուսումնասիրման առանձնահատկությունները») բաղկացած է չորս ենթագլուխներից:

2.1. «Գոյականի տարբեր հոլովներով լրացում ունեցող բառակապակցությունների հատկանիշները և նրանց ուսումնասիրման առանձնահատկությունները» ենթագլխում տրվում են գոյականական բառակապակցությունները, որոնց կախյալ անդամներն ունեն հոլովական տարբեր արտահայտությունները՝ ուղղական (արքա Արշակ), սեռական (ձյան հալոցք), տրական (ծաղիկը ձեռքին), հայցական (Քրիստոսի մուտքը Երուսաղեմ), բացառական (ոսկուց մատանի), գործիական (ճաշակով զգեստ) և ներգոյական (հանդիպում զբոսայգում): Բառակապակցության յուրաքանչյուր տիպ մատուցվում է մեթոդական որոշակի հնարների միջոցով և համապատասխան բնագրային օրինակներով, որոնք ապահովում են միջառարկայական անհրաժեշտ կապեր:

2.2. «Տարբեր խոսքի մասերով լրացում ունեցող գոյականական բառակապակցությունների ուսումնասիրումը» ենթագլխում տրվում են գոյականական այն բառակապակցությունները, որոնց ստորադաս անդամներն արտահայտված են տարբեր խոսքի մասերով՝ *ածականով* (աղամանդե թագ), *թվականով* (հինգերորդ շարասյուն), *դերբայներով* (լացող ուռենի), *կապական կառույցներով* (ձեռնոցներ զինվորների համար): Այս ենթագլխում գործադրվում են ավանդական (զրույց, բացատրություն) և

համագործակցային (ԽԻԿ համակարգ, Խճանկար, Տրամագիր (դիագրամ) մեթոդներ և մեթոդական հնարներ: Առաջարկվում են տարաբնույթ վարժություններ:

2.3. «Ածականական բառակապակցությունների ուսումնասիրումը» ենթագլխում մատուցվում են ածականական բառակապակցությունները (**Մասիսի նման բարձր, ձյան պես ճերմակ, տեսքով հմայիչ** և այլն):

Թեմայի ուսումնասիրման գործընթացն իրականացվում է քայլաշարային եղանակով՝ զուգակցված մեթոդամանկավարժական մի շարք սկզբունքներով: Նպատակային է այն իրականացնել զրույցի, բացատրության մեթոդներով, իսկ թեմայի ամփոփման փուլում՝ արդի մեթոդների ու մեթոդական հնարների օգտագործմամբ (Դեբատ, խմբային աշխատանք):

2.4. «Թվականական և մակբայական բառակապակցությունների ուսումնասիրումը» ենթագլխում մեկնաբանվում են թվականական (**ամբողջ ութսուն**, **հազիվ տասնչորս**) և մակբայական (***այնքան շատ***, ***այնքան արագ***) բառակապակցությունների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, բերվում են համապատասխան վարժություններ, որոնք միտված են հաղորդած լեզվական նյութն ամրապնդելուն և գործնական հմտությունների վերածելուն:

Երրորդ գլուխը («Բայական բառակապակցությունների ուսումնասիրման գործընթացի առանձնահատկությունները միջին դպրոցում») բաղկացած է հինգ ենթագլուխներից:

3.1 «Տարբեր հոլովներով լրացում ունեցող բայական բառակապակցությունների ուսումնասիրումը» ենթագլխում դիտարկվել են բայական բառակապակցությունների ուսուցման մեթոդական հնարները. ուսումնական նյութը մատուցվել է որոշակի բաժանումով. այն է՝ բայական բառակապակցությունների գերադաս անդամի լրացումների արտահայտությունը տարբեր հոլովներով՝ *տրական* (մասնակցել ժողովին), *հայցական* (ուսումնասիրել նյութը), *բացառական* (հեռանալ դպրոցից), *գործիական* (զբաղվել ընթերցանությամբ), *ներգոյական* (հանդիպել զբոսայգում):

3.2. «Տարբեր խոսքի մասերով լրացում ունեցող բայական բառակապակցությունների ուսումնասիրումը» ենթագլխում տրվում են բայական այն բառակապակցությունները, որոնց լրացումներն արտահայտված են տարբեր խոսքի մասերով՝

ա) *ածականով* (հպարտ կանգնել, երկար սպասել). կիրառվում է *«Մտագրոհ»* մեթոդը,

բ) *մակբայով* (***ամենուրեք ծաղկած***, ***տիրաբար իշխող***). կազմակերպվում է *<<Որոնողական>>* մեթոդով,

գ) կապական կառույցով (***դեպի կինոթատրոն գնալ***, ***աղբյուրի մոտ զբոսնել***). ուսումնասիրվում է *համագործակցային* (ԽԻԿ, «Հասկացությունների քարտեզ», «Խմբային աշխատանք», «Տրամագիր (դիագրամ)» և *ավանդական*

(զրույց, բացատրություն) մեթոդների և մեթոդական հնարների, վարժություն-առաջադրանքների զուգակցմամբ,

դ) *դերբայով (ճամփորդելիս հանդիպել, անցնելիս նկատել, սիրելով հեռանալ). «Փոխգործուն գրառումների համակարգն» (ՓԳՀ)* օգնում է աշակերտներին ուսումնական նյութը կարդալու ընթացքում վերհիսկել սեփական ընկալումը:

3.3 «Դերբայական բառակապակցության շարահյուսական դերի բացահայտումը ԽԻԿ համակարգի միջոցով» ենթագլխում նպատակահարմար է **խթանման փուլում** «Մտագրոհ» մեթոդական հնարի միջոցով կրկնել այն դերբայները, որոնք իրենց լրացումներով բառակապակցություն են կազմում, այդ դեպքում աշակերտներն առանց դժվարության կյուրացնեն տվյալ լեզվական իրողության կառուցվածքային տարրերը: Դրանք ինքնուրույն շարահյուսական կիրառություն ունեցող դերբայներն են, որոնք այլ կերպ կոչվում են *անկախ դերբայներ:*

Իմաստի ընկալման փուլում անհրաժեշտ է աշակերտներին ծանոթացնել դերբայական դարձվածի՝ շարահյուսական կիրառության առանձնահատկություններին. դերբայական դարձվածն ամբողջությամբ վերցրած նախադասության մեջ մեկ պաշտոն է կատարում: Օրինակ՝ *Դիլան դային վրա վազեց և* ***արագ վազելիս*** *նկատեց, որ մի սպիտակ շուն, լեզուն պահած, ցատկեց թփուտների կողմը (ԱԲ, ԱՄ, 44)՝ (ժամանակի պարագա):*

Կշռադատման փուլում յուրացրածը հիշողության մեջ ամրակայելու համար սովորաբար կատարվում են վարժություններ, որոնք օգնում են խորությամբ գիտակցելու սովորածը: Որպեսզի յուրաքանչյուր աշակերտ կարողանա ինքնուրույն դերբայներին լրացում ավելացնել, կազմել դերբայական դարձվածներ, որոշել դերբայական դարձվածի շարահյուսական դերը, շարադասությունն ու կետադրությունը, կատարում ենք գրավոր վարժություններ:

3.4. «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդի կիրառումը «Բառակապակցություն» թեման ամփոփելիս» ենթագլխում «Շրջագայություն պատկերասրահում» մեթոդական հնարի կիրառմամբ սովորողները փոխանակում են բառակապակցության մասին իրենց յուրացրած գիտելիքները, մշակում գաղափարներ և համագործակցային եղանակով ամփոփում թեմայի վերաբերյալ ձեռք բերած գիտելիքները: Այս մեթոդը զարգացնում է վերլուծելու, համադրելու, լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու սովորողների կարողությունները:

«Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրությունից հետո ուսուցիչն առանձնացնում է այդ թեմայի էական, գործնական, կիրառական նշանակություն ունեցող հարցերը: Նախընտրելի է թեմայի վերաբերյալ կազմել թեստային աշխատանք, որի միջոցով էլ կարող է պատկերացում կազմել, թե սովորողներն ի՛նչ են յուրացրել, և ի՛նչ է թերի մնացել:

3.5. «Բառակապակցության» ուսումնասիրման ճանապարհով դպրոցականների խոսքի զարգացման ու ընթերցողական կարողության կատարելագործմանն ուղղված փորձարարական աշխատանքների արդյունքների վերլուծություն»:

«Բառակապակցություններ» թեմայի ուսումնասիրման գործընթացի ուղղությամբ մեր գիտափորձն անցկացրել ենք Երևանի Ռաֆֆու, Խրիմյան Հայրիկի անվան դպրոցներում, ԵՕՀՊՄ քոլեջում: Գիտափորձերը սկսելուց առաջ հայոց լեզվի ուսուցիչներին բաժանել ենք հարցաթերթիկ՝ «Բառակապակցություններ» թեմայի ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով թեմատիկ պլան մշակելու համար:

Դիտարկել ենք փորձարարական (5 դասարան, 139 աշակերտ) և ստուգողական (6 դասարան, 161 աշակերտ) դասարանների սովորողների կողմից հանձնարարությունների կատարման արդյունքները: Յուրացված գիտելիքների մակարդակը համեմատելու համար մենք վերլուծել ենք ստուգողական աշխատանքների արդյունքները «Գոյականական բառակապակցություններ» և «Բայական բառակապակցություններ» թեմայով և մեկնաբանել սովորողների խոսքի զարգացման ու բառապաշարի հարստացման բովանդակությունը:

Աղյուսակ 2

Ձևավորող գիտափորձի ընթացքում «Բառակապակցություններ» թեմայի բովանդակության յուրացման արդյունքները (%-ով).

Չափանիշներ (դասարաններ)	Փորձարարական		Ստուգողական	
	Գիտափոր-ձից առաջ	Գիտափոր-ձի վերջում	Գիտափոր-ձից առաջ	Գիտափորձի վերջում
Դրանցից բարձր Մակարդակ	15.2	18.7	14.6	15.6
միջին մակարդակ	63.4	67.4	59.2	31.3
ցածր մակարդակ	21.4	14.5	26.2	22.8
Դատողությունների հիմնավորվածություն, գիտակցվածություն, գնահատելու, եզրահանգելու և ընդհանրացումներ կատարելու կարողություն	43.2	58.3	39.1	50.6

Գիտափորձի սկզբում ստուգողական և փորձարարական խմբերում գիտելիքների և ինքնուրույն գործունեություն իրականացնելու մակարդակը գրեթե նույնն էր, գիտափորձի վերջում փորձարարական խմբերում ընդգրկված սովորողներն ավելի բարձր արդյունքները ցուցաբերեցին՝ յուրացման բարձր

մակարդակի շարժընթացը 15,2%-ից աճել էր 18,7%-ի, իսկ ստուգողական խմբերում՝ 14,6%-ից և 15,6%-ի։ Այսինքն՝ արդյունավետության ցուցանիշը աննշան է։ Ցածր մակարդակի վրա մնաց ստուգողական խմբերի սովորողների 22,8%-ը և փորձարարական խմբերի՝ 14,5%-ը։

Գիտափորձի արդյունքների մեջ մասնավորապես կարևորում ենք այն, որ սովորողները ձեռք բերեցին ինքնուրույն աշխատանք կատարելու կարողություններ, ունակություններ և հմտություններ։ Ահա դրա արդյունքները՝ արտահայտված աղյուսակով։

Աղյուսակ 3

Սովորողների ինքնուրույն աշխատանքի կատարման արդյունքների համեմատական աղյուսակ (%-ով).

N	Մակարդակ	Մինչև փորձը		Փորձից հետո	
	Դասարան	փորձար.	ստուգ.	փորձար.	ստուգ.
1.	Միջին	46.1	45	54.4	48.6
	Ցածր	39.9	41	34.2	41.3
	Չեն կատ.	14	14	11.4	10.1
2.	Միջին	53.1	63.7	62.8	55.2
	Ցածր	36.7	27	34.5	37.8
	Չեն կատ.	10.2	9.3	2.7	7
3.	Միջին	16.1	17	50.4	47.6
	Ցածր	79.6	77.7	44.1	45.6
	Չեն կատ.	4.3	5.3	5.5	6.8
4.	Միջին	58.3	57.1	60.7	59.8
	Ցածր	30	29.4	31.2	29.7
	Չեն կատ.	11.7	13.5	8.1	10.5
5.	Միջին	49.3	46.3	53.6	54.8
	Ցածր	37.4	40,5	38.8	37.1
	Չեն կատ.	13.3	13.2	7.6	8.1

Այսպիսով, գիտափորձի արդյունքների համեմատական վերլուծությունը և ստացված արդյունքները ցույց են տալիս, որ մեր մշակած մեթոդական համակարգը լիովին բավարարում է հանրակրթության հիմնական դպրոցում «Բառակապակցություններ» թեմայի ուսուցմանը ներկայացվող պահանջները։ Ուսուցման գործընթացի վերջնական փուլում սովորողներն ի վիճակի են գիտակցված կերպով յուրացնելու լեզվական այդ իրողության առանձնահատկությունները շարահյուսական մակարդակում, մյուս կողմից՝ կարող են բառակապակցությունները գործածել իրենց գրավոր և բանավոր խոսքում՝ զերծ մնալով օտարալեզու ազդեցություններից, պահպանելով հայեցի լեզվամտածողություն։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր ուսումնասիրության և հատուկ նպատակով իրականացրած փորձարարական աշխատանքների ընթացքում մենք հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

1. «Բառակապակցություն» թեմայի ուսումնասիրման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ներառարկայական և միջառարկայական կապերի ապահովմամբ, այդ ճանապարհով լեզվական նշված միավորի նկատմամբ սովորողների շահագրգիռ ուսուցման հիմնահարցի լուծմանը:

2. Հանրակրթության հիմնական դպրոցում «Բառակապակցություններ» թեմայի ուսումնասիրությունն իր գոյականական և բայական տեսակներով ու ենթատեսակներով անհրաժեշտ է և հնարավոր է իրականացնել՝

ա) պահպանելով աստիճանականության սկզբունքը

բ) փոխգործուն և համագործակցային մեթոդների ու մեթոդական հնարների միջոցով իրականացվող լեզվական վարժությունների համակարգի, ուսուցման տեխնիկական միջոցների, հաղորդակցական – տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման միջոցով:

3. Հիմնական դպրոցում «Բառակապակցություններ» թեմայի ուսումնասիրությունը՝ գոյականական և բայական տեսակներով, նպաստում է՝

ա) աշակերտների բառապաշարի հարստացմանն ու բանավոր խոսքի զարգացմանը, կետադրական կանոնների յուրացմանն ու գրավոր խոսքում դրանց ճիշտ գործածությանը,

բ) գեղագիտական, տրամաբանական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

4. «Բառակապակցություններ» թեմայի ուսումնասիրումը սովորողներին ընձեռում է շրջապատող մարդկանց և առարկաները նկարագրելու, նրանց բնութագիրը ներկայացնելու, կարծիք հայտնելու, կապակցված և պատկերավոր խոսք կառուցելու, ազատ և անկաշկանդ հաղորդակցվելու, սեփական հույզերն ու զգացմունքներն արտահայտելու, այլոց համար հասկանալի լինելու հնարավորություն:

5. Գեղարվեստական բնագրերի կամ դրանցից ընտրված հատվածների ուսուցումն ու տեքստերի շուրջ իրականացվող բառակազմության ուսումնասիրմանը միտված աշխատանքները նպաստում են սովորողների կարդալու հմտության և ընթերցողական կարողության բաղադրիչների ձևավորմանն ու զարգացմանը:

6. Մեր կողմից մշակած մեթոդական հնարների և փոխգործուն մեթոդների կիրառման ձևերը, վարժությունների համակարգն ու դրանց կատարման արդյունավետությանը նպաստող մեթոդական և լեզվաբանական երաշխավորությունները կբարձրացնեն ոչ միայն «Բառակապակցություն»

թեմայի յուրացման մակարդակը հիմնական դպրոցում, այլև կապահովեն գիտելիքների գիտակցական յուրացում, կրթության և մայրենի լեզվի նկատմամբ շահագրգիռ վերաբերմունք:

7. Ուսումնասիրության հիմնախնդրի շուրջ մեր կատարած հետազոտության ընթացքում ձեռք բերած փաստերն ու դրանց հիման վրա ձևակերպած եզրակացություններն անառարկելի չեն: Դրանք կարող են նոր վարկածների ծագման և կրթության ոլորտում հետագա ուսումնասիրման առարկա դառնալ և նոր զարգացումներ ստանալ:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. Գոյականի լրացումները տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովներով, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայագիտական հանդես, N 2-3 (14-15), Ե., 2010, էջ 49-56:
2. Գոյականական բառակապակցության ուսուցումը 8-րդ դասարանում, Լեզու և կրթություն, N 2, Զանգակ-97 հրատ., Ե., 2011, էջ 95-103:
3. Դերբայական դարձվածի ուսուցումը 8-րդ դասարանում, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայագիտական հանդես, N 2-3 (14-15), Ե., 2011, էջ 189-195:
4. Բայական բառակապակցությունների ուսուցումը (Բայական անդամի լրացումները տրական հոլովով) , Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայագիտական հանդես, N 2- Ե., 2012 էջ 19-28:
5. Ածականական, թվականական և մակբայական բառակապակցությունների ուսուցումը, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայագիտական հանդես, N 2-3 (26-27), Ե., 2014, էջ 308-318:
6. Տարբեր խոսքի մասերով ստորադաս անդամ ունեցող բայական բառակապակցությունների ուսուցումը, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայագիտական հանդես, N 1 (35), Ե., 2017, էջ 147-155:

ХАЛАТЯН АРМЕНУИ ГЕГАМОВНА

ИЗУЧЕНИЕ СЛОВОСОЧЕТАНИЙ В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНОЙ ОСНОВНОЙ ШКОЛЕ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 "Методика преподавания и воспитания (армянский язык)".

Защита диссертации состоится в 2018г. в 24-ого января в 12^{00} ч. на заседании специального совета 020 ВАК РА, при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна.

Адрес 0010, г. Ереван, ул. Тиграна Меца, 17

РЕЗЮМЕ

Актуальность темы исследования. В современном языке, особенно в средствах массовой информации, используется большое количество калькированных словосочетаний, не соответствующих закономерностям армянского языка. Подобные неправильные конструкции влияют на устную речь учащихся, что находит отражение в письменной речи. Это в основном относится к случаям неправильного грамматического управления и согласования, использования иноязычных стилей, поэтому научно-методическое изучение словосочетаний может стать основой построения связной речи в основной общеобразовательной школе.

Актуальность темы исследования обусловлена необходимостью осуществляемых в основной школе задач обучения в данном направлении, а также важностью методических разработок, направленных на предотвращение и преодоление возможных ошибок.

Целью исследования является разработка и внедрение в педагогический процесс методической системы традиционных и современных интерактивных методов, коммуникационных и обучающих технических средств, специфических форм организации работы, повышающих эффективность обучения словосочетаниям.

Предметом исследования является методическая система и практического применения словосочетаний в основной школе.

Научная новизна исследования заключается в:

1. **В новом подходе к процессу обучения** словосочетаниям в как средство развития устной речи школьников и обогащения их словарного запаса.

2. **В осуществлении обучения темы** “Словосочетания” посредством новой технологий, при которых каждый метод и методический прием, средство и форма рассматриваются в качестве неотъемлемой части предлагаемой исторической системы.

3. В практическом применении элементов, разработанной нами технологической системы с данными педагогики, возрастной психологии, лингвистики и современной методики преподавания, сведении их воедино и применении в соответствии с научно-практической ценностью.

Теоретическая значимость исследования. Были разработаны научно-теоретические и методические основы изучения темы, а также сформулированы методические приемы, обеспечивающие последовательность изучения предмета исследования в разных звеньях обучения армянскому языку.

Практическая значимость исследования. Основы разработанной нами методической системы в области изучения темы содержат определенные указания и рекомендации, которые могут быть использованы учителями родного языка, студентами филологических факультетов и факультетов начального образования, а также специалистами, занятыми вопросами теории языка при составлении предметных программ и учебников.

Апробация и внедрение результатов исследования.

Результаты исследования внедрены в школы имени Раффи и Хримян Айрика города Еревана, в Государственный спортивный колледж олимпийского резерва, явившиеся экспериментальной базой.

Диссертация обсуждалась на кафедре армянского языка и методики его преподавания Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Основные положения исследования нашли отражение в опубликованных статьях.

Объем и структура исследования. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы, объем диссертации – 167 компьютерных страниц, включая восемь графиков и таблиц.

KHALATYAN ARMENUHI GEGHAM

STUDY OF PHRASES IN COMPREHENSIVE SCHOOL

Thesis 13.00.02. for the degree of candidate of pedagogical sciences on the specialty "Teaching and Upbringing Methodology (Armenian Language)".

The defense of the thesis will be held at 12^{00} on january 24 , 2018 at the session of 020 special council of the RA SAC acting at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

Address: 0010, Yerevan, Tigran Mets street 17.

RESUME

Topicality of the research relevance

A great number of calqued phrases not corresponding to the regularities of the Armenian language are used in the modern language, especially in the mass media. Such incorrect constructions affect the oral speech of students, which is reflected in the written speech. This mainly refers to the cases of improper grammatical management and harmonization, the use of foreign language styles, so the scientific and methodological study of phrases can become a basis for the construction of coherent speech in the basic comprehensive school.

The topicality of the research topic is conditioned by the importance of the works carried out in the basic school in the given direction, as well as by the importance of methodological developments aimed at preventing and overcoming possible mistakes.

The aim of the research is to develop and introduce in the pedagogical process the technological system of traditional and modern methods, methodical techniques, communication and teaching technical means, the original forms of organization of work increasing the effectiveness of the study of phrases.

The subject of the research is the methodological complex on the practical application of the elements of technological system of study of phrases in the basic school.

The scientific novelty of the research is in:

1. A new approach to the process of **teaching and learning** of as a means of developing oral speech of schoolchildren and enriching their vocabulary.

2. The training of the topic "Phrases" by means of a new technological system, in which each method and methodical device, tool and form are considered as an integral part of the proposed technological system.

3. The comparison of the practical application of elements of our technological system with the data of pedagogy, age psychology, linguistics and modern methodology of teaching, bringing them together and applying in accordance with the scientific and practical value.

Theoretical significance of the research. The theoretical and methodical bases of the study of the topic have been developed, and methodical methods providing the consistency of the study of the subject of research in different parts of the Armenian language teaching have been formulated.

Practical significance of the research. The bases of the methodological systems developed by us in the field of the study of the topic contain certain guidelines and recommendations that can be used by the native language teachers, the students of philological faculties and faculties of primary education, as well as by specialists engaged in the issues of the theory of language while compiling the subject programs and textbooks.

Testing and introduction of research results

The results of the research have been introduced in schools after Raffi and Khrimyan Hayrik of the city of Yerevan, in the State Sports College of the Olympic Reserve, which became an experimental base.

The thesis has been discussed at the chair of the Armenian Language and the Methods of its Teaching at the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. The main provisions of the study have been reflected in the published articles.

The volume and structure of the research. The thesis consists of an Introduction, three Chapters, a Conclusion and a List of used literature, the volume of the thesis makes 167 printed pages, including eight diagrams and tables.